ԱՐՄԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՈՐՈՇ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Հոդվածում վերլուծվում են Հարավային Կովկասի տարածաշրջանում Հայաստանի և Ռուսաստանի հետաքրքրությունները, գնահատվում են դրանց ազդեցությունը թե՛ երկրների անվտանգության, թե՛ ընդհանրապես տարածաշրջանում կայունության երաշխավորման գործընթացներում: Հայ-ռուսական գործակցությունը Հարավային Կովկասում կայունության ապահովման հատուկ գրավական է, որը որոշակիորեն անհրաժեշտ է նաև տարածաշրջանային չլուծված հակամարտություններից մեկի՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման, շփման գծում լարված իրավիճակներից խուսափելու համար:

Հիմնաբառեր- *Հարավկովկասյան տարածաշրջան, դաշնակցային հարաբերություններ, արտաքին քաղաքականություն, կայունություն, անվտանգություն, փոխգործակցություն:*

Հայ-ռուսական հարաբերությունները, դրանց զարգացումը, երկու երկրների միջև համագործակցությունը բարդ ու բազմակողմանի գործընթացներ են և երկուստեք ներառում են քաղաքական, հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառները: Պատմական բավականաչափ փորձ ունեցող այդ հարաբերությունները ձեռք են բերվել ժամանակի ընթացքում երկու ժողովրդների պատմության մեջ արդեն դրոշմված փոխադարձ վստահության, օգնության և փոխըմբռնման արդյունքում:

Ռուսաստանի Դաշնության համար Հարավային Կովկասը միշտ հանդիսացել է ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող տարածաշրջան և շատ դեպքերում ազդել նրա ազգային անվտանգության վիճակի վրա[1]: Դրա մասին են վկայում վերջին երկու տասնամյակներում տեղի ունեցած իրադարձությունները, սոցիալ-մշակութային և տնտեսական համագործակցության վրա հիմնված գործընկերական հարաբերությունների զարգացումները հարավկովկասյան երկրների հետ: Հարավային Կովկասը, երկար ժամանակ համարվելով աշխարհի առաջատար պետությունների աշխարհաքաղաքական շահերի համար սոսկ երկրորդական նշանակության գոտի, այսօր արդեն հայտնվել է տարբեր երկրների ու քաղաքական ուժերի մրցակցության կենտրոնում, քանի որ սկսել է դիտվել որպես բնական ռեսուրսների աղբյուր[2]:

Հարավային Կովկասում Ռուսաստանը իր ռազմական ներկայությունը դիտում է ոչ այնքան որպես քաղաքական ազդեցության գործոն, որքան նաև սեփական անվտանգության բաղադրիչ մաս: Հետևաբար, այդ ներկայության նպատակներն ու խնդիրները պետք է համապատասխանեցվեն տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի պահպանման ու ամրապնդման հեռանկարների հետ: Ռուսաստանի համար անցանկալի է հարավկովկասյան երկրների անդամակցությունը և բարիդրացիական հարաբերություններն այնպիսի կառույցներին ու դաշինքներին, ինչպիսին է, օրինակ, Հյուսիսատլանտյան դաշինքը (ՆԱՏՕ):

Նման աշխարհաքաղաքական իրողությունը պահանջում է մի կողմից որոշակիացնել Ռուսաստան-ՆԱՏՕ փոխհարաբերությունները հարավկովկասյան տարածաշրջանում քաղաքական և ռազմական ուժերի դասավորվածության նոր պայմաններում, մյուս կողմից՝ գտնել շփման կետեր հարավկովկասյան պետությունների հետ տնտեսական, հումանիտար, բնապահպանական, հակահաբեկչական, թմրանյութերի տարածման դեմ պայքարի, ռազմական-տեխնիկական համագործակցության գործընթացներում[3]:

Հետխորհրդային ու դրան հաջորդող ժամանակաշրջանում հարավկովկասյան պետությունների քաղաքականության վրա հետզհետե զգալիորեն ուժեղացել է Ամերիկայի Միացյալ Նահանգների և Եվրոպական միության ազդեցությունը, ավելացել են նրանց վրա ազդելու վերջիններիս լծակները: Բնականաբար, Արևմուտքի ազդեցության ամրապնդումը հանգեցնում է Ռուսաստանի դիրքերի թուլացմանը: Ռուսաստանը, որպես հակակշիռ ԱՄՆ-ին և ԵՄ-ին, պետք է գործընկերական սերտ հարաբերություններ պահպանի Իրանի, Հնդկաստանի, Մերձավոր և Հեռավոր Արևելքի երկրների հետ, ապահովի տարածաշրջանային նշանակության տարանցիկ այնպիսի միջանցքների և ուղիների անխափան գործունեությունը, ինչպիսին է, օրինակ, «Հյուսիս-Հարավ»-ը և այլն:

Հարավային Կովկասը, ինչպես հայտնի է, ուղղակիորեն կապված է Ռուսաստանի Դաշնության կազմի մեջ մտնող հյուսիսկովկասյան հանրապե-

տությունների և դրանցում ընթացող գործընթացների հետ[4], հետևաբար՝ Ռուսաստանը մեծապես շահագրգռված է, որ հարավկովկասյան երկրները ի զորու չլինեն ցուցաբերելու բացահայտ կամ թաքնված որևէ ազդեցություն հյուսիսկովկասյան հանրապետությունների վրա, մանավանդ՝ եթե այդ ազդեցությունը կարող է կրել ապակայունացնող բնույթ: Այդ իսկ պատճառով առկա է Ռուսաստանի և հարավկովկասյան երկրների միջև հարաբերությունների հավասարակշռման խնդիր, որպեսզի վերջիններիս տարածքը կամ ռեսուրսները երբևիցե չօգտագործվեն ընդդեմ Ռուսաստանի: Առանց Կովկասում էթնիկական և զինված տեղային այլ բնույթի կոնֆլիկտների լուծման Ռուսաստանը սեփական անվտանգության ապահովման, նավթի ու գազի արդյունահանման մրցունակության, տրանսպորտային մայրուղիների անխափան կապերի առումներով բավականին լուրջ դժվարությունների առջև կարող է կանգնել:

Ռուսական իշխանությունների համար անհանգստության ևս առիթ են հանդիսանում տարածաշրջանում էթնիկական, սոցիալական, տարածքային և այլ տարաձայնություններից բխող բացասական միտումները կապված ահաբեկչության, թմրանյութերի արտադրության ու տարածման, կրոնական հողի վրա ծայրահեղականության, այլ բնույթի ու մասշտաբների կոնֆլիկտների հետ[5]: Այդ իսկ պատճառով Հարավային Կովկասում Ռուսաստանի ռազմաքաղաքական մարտավարությունը պետք է բխի ոչ միայն բուն Ռուսաստանի, այլ նաև տարածաշրջանի պետությունների ազգային շահերից և ապահովի տարածաշրջանում, ինչպես նաև մերձկասպյան շրջանում տնտեսական ներկայությունն ու ռազմաքաղաքական ազդեցությունը:

Հարավային Կովկասի նկատմամբ ռուսական պետության այդ մարտավարությունը, ինչպես նաև բազմաթիվ այլ գործառույթներն ու գործընթացները կարող են հանգեցնել ներքոնշյալ հնարավոր զարգացումներին.

1. Թույլ չտալ Հարավային Կովկասում և սևծովյան գոտում տարածաշրջանային ու համաշխարհային համագործակցության զարգացման դեմ ուղղված արհեստական խոչընդոտների առաջացումը:

2. Տարածաշրջանային անվտանգության մարտավարության մշակման գործում Ռուսաստանը պետք է ամեն ինչ անի, որպեսզի իր կարծիքը լսվի և հաշվի առնվի, քանի որ Կովկասը մեկ միասնական, փոխազդող տարածք է, որի մի մասը գտնվում է հենց Ռուսաստանի Դաշնության կազմում:

3. Ռուսաստանը պետք է հաշվի առնի, որ կովկասյան տարածաշրջանում կայունության պահպանումից կախված է նաև երկրամասի տնտեսության զարգացումը: Դրա համար անհրաժեշտ է ճշգրիտ մշակել տարածաշրջանային կոնֆլիկտների լուծման հեռանկարները:

4. Հնչեցնել սեփական կարծիքը և դիրքորոշումը Հարավային Կովկասում ուժերի ռազմավարական հավասարակշռության և Ռուսաստանին տարածաշրջանային ուժային բևեռներից դուրս մղելու վերաբերյալ:

5. Չմասնակցել տարածաշրջանային այն կոնֆլիկտներին, որոնք ուղղակիորեն կամ անմիջականորեն չեն հակասում իր շահերին, այլ սահմանափակվել կոնֆլիկտի մասնակիցների քայլերին գնահատականներ տալով:

Սակայն, չկան հարավկովկասյան տարածաշրջանային այնպիսի կոնֆլիկտներ, որոնք այս կամ այն առումով չեն շոշափի Ռուսաստանի Դաշնության շահերը[6]: Ուստի, այդ կոնֆլիկտների լուծման գործում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել հենց Ռուսաստանի անվտանգության հետ կապված շահերին: Ռուսաստանը կոնֆլիկտների լուծման գործում օբյեկտիվ դատավորի դերում հանդես գալիս պետք է հենվի դրան հասնելու ոչ թե ռազմական, այլ քաղաքական ու տնտեսական լծակների վրա:

Այսպիսով կարելի է փաստել, որ Ռուսաստանը հանդիսանում է Հարավային Կովկասի թերևս ամենաուժեղ և ամենաազդեցիկ ակտորը, հետևաբար, խնդիրների լուծման համար քաղաքական, տնտեսական և այլ ռեսուրսների կենտրոնացման ու հավաքագրման բեռը ընկած է հենց նրա ուսերին: Այդ ռեսուրսները անհրաժեշտ է կենտրոնացնել և ուղղել այնպիսի խնդիրների լուծմանը, ինչպիսիք են տարածաշրջանային անվտանգության պահպանումը, քաղաքական ու կրոնական ծայրահեղականության տարածման կանխարգելումը, կարգավորել հին կոնֆլիկտները և բացառել նորերը, զարգացնել էներգահոսքերի, տրանսպորտային ուղիների համակարգը և այլն: Այս ամենը պետք է արվի այնպես, որ տարածաշրջանի երկրների միջև ոչ թե մրցակցություն սկսվի այս կամ այն ծրագիրը իրենց տարածքում իրականացնելու համար, այլ պետք է հաստատվի փոխհամագործակցություն և գիտակցումն այն հանգամանքի, որ իրենց երկրների զարգացումն անմիջականորեն կապված է Հարավային Կովկասի տարածաշրջանի զարգացման հետ:

Հայաստանը, հանդիսանալով Հարավային Կովկասի երեք հանրապետություններից մեկը, մասնակցում է ռազմական, քաղաքական, տնտե-

սական և այլ բնույթի գրեթե բոլոր այն գործընթացներին, որոնք տեղի են ունենում տարածաշրջանում: Հայաստանն անդամակցում է Մաքսային միությանը, զուգահեռ ընթանում է Ադրբեջանի և Թուրքիայի միջև հարաբերությունների բյուրեղացում և դաշինքի ձևավորում, իսկ Վրաստանը ամերիկա-եվրոպական կողմնորոշմանը զուգահեռ իշխանափոխությունից հետո սկսել է կարգավորել Ռուսաստանի հետ հարաբերությունները[7]: Տարածաշրջանային բոլոր իրադարձությունները անմիջական ազդեցություն ունեն Հայաստանի քաղաքական կյանքի վրա, և, հակառակը, հայկական պետությունն իր հերթին ակտիվորեն մասնակցում է Հարավային Կովկասի քաղաքական կյանքին, այդ թվում՝ անվտանգությանը վերաբերող գործընթացներին:

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը և երկրի մասնակցությունը աշխարհում ու տարածաշրջանում անվտանգության ապահովման խնդիրներին պայմանավորված է մի շարք գործոններով: Առանց դրանք հաշվի առնելու հնարավոր չէ ներգրավվել տարածաշրջանային ռազմաքաղաքական և տնտեսական համակարգի մեջ և վարել արդյունավետ արտաքին քաղաքականություն: Այդ հիմնական գործոններից են Հայաստանի աշխարհագրական դիրքը, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, Ռուսաստանի Դաշնության հետ ռազմավարական գործընկերությունը, Հայաստանում արտատարածաշրջանային մյուս ուժերի (ԱՄՆ, ԵՄ, Թուրքիա և Իրան) կենսականորեն կարևոր շահերը:

Անկախացումից հետո Հայաստանը բավական ժամանակ գործում էր կառավարության, արտաքին գործերի նախարարության, ուժային կառույցների և պետական այլ մարմինների կողմից մշակված ազգային անվտանգության «լոկալ» դոկտրինաներով, որոնք փոխլրացնում էին միմյանց, սակայն երբեմն անհամապատասխանություններ ունեին: Չկային ազգային անվտանգության միասնական, հեռանկարային սկզբունքներ: Նման իրավիճակը տևեց մինչև 2007 թվականը, երբ այն ժամանակվա նախագահ Ռ. Քոչարյանի կողմից ստորագրվեց ՀՀ ազգային անվտանգության այլ տրամաչափ նախատեսող ռազմավարության հաստատման մասին հրամանագիրը: Հատկանշական է այդ փաստաթղթի այն մասը, որը վերաբերում է արտաքին քաղաքականության ռազմավարությանը: Դրա համաձայն՝ ՀՀ արտաքին անվտանգությունն իրականացվում է 3 հարթություններում՝ միջազգային տարածություն, տարածաշրջանային և համահայկական: Առաջին հարթությունը ենթադրում է Հայաստանի համագործակցությունը միջազգային այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսին է ՆԱՏՕ-ն, երկրի մասնակցությունը եվրոպական այնպիսի կազմակերպությունների գործունեությանը, ինչպիսին է ՄԱԿ-ը, ԵԽ-ը, ԵԱՀԿ-ը: Տարածաշրջանային հարթության վրա արտաքին անվտանգության ապահովումը ենթադրում է Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին, ինչպես նաև երկկողմանի համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության հետ: Իսկ համահայկական հարթության տակ ենթադրվում է դիվանագիտական և ներկայացուցչական առաքելությունների միջոցով հայկական Սփյուռքի իրավունքների ու շահերի պաշտպանությունը[8]:

Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մեջ ամրագրված հիմնական մոտեցումներին համապատասխան՝ անվտանգությունը հենվում է միմյանց հետ կապված 4 բաղադրիչների վրա: Առաջին բաղադրիչը հայ-ռուսական հարաբերություններն են և ռազմավարական գործընկերությունը: Այդ հարաբերությունների իրավական բազան են հանդիսանում մի շարք համաձայնագրեր, որոնցից անվտանգության ապահովման առումով կարևորագույնը «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության, գործընկերության և փոխադարձ օգնության մասին» պայմանագիրն է: Համաձայն այս փաստաթղթի՝ «Կողմերն իրար հետ փոխգործակցելու են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության ինքնուրույնության պաշտպանության, տարածքային ամբողջականության և անվտանգության ապահովման համար: Նրանք իրար հետ անհապաղ կխորհրդակցեն ամեն անգամ, երբ, կողմերից մեկի կարծիքով, իր վրա առկա է զինված հարձակման վտանգ՝ համատեղ պաշտպանության նկատառումներից ելնելով և խաղաղության ու փոխադարձ անվտանգության ապահովման համար»[9]: Երկրորդ բաղադրիչը Հայաստանի անդամակցությունն է Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ): Համաձայն պայմանագրի 2-րդ հոդվածի՝ «Անդամ-պետություններից մեկի կամ մի քանիսի անվտանգության, տարածքային ամբողջականության և ինքնուրույնության կամ միջազգային խաղաղության ու անվտանգության համար սպառնալիքի առաջացման դեպքում անդամ-պետություններն անհապաղ գործի կդնեն համատեղ խորհրդակցությունների մեխանիզմը սեփական դիրքորոշումների կոորդինացիայի համար, ստեղծված սպառնալիքի վերացման նպատակով: Եթե

www.journal.lawinstitute.am

անդամ պետություններից մեկը որևէ պետության կամ պետությունների խմբի կողմից ենթարկվել է ագրեսիայի, ապա դա կդիտվի որպես ագրեսիա Պայմանագրի անդամ բոլոր պետությունների նկատմամբ»[10]: Հաջորդ բաղադրիչն արդեն վերաբերում է եվրոատլանտյան ուղղությանը, որի իրավական բազան Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագիրն է (ԵՍԶՈՒՊ), որի իրականացման սկզբունքների և կարգի մասին համաձայնագրերը վավերացվել են 1992 թվականի մայիսի 15-ին Տաշքենդում[11]: Հայաստանը մասնակցում է նաև ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին[12]: Եվ, վերջապես, չորրորդ բաղադրիչը հայ-ամերիկյան ռազմական համագործակցությունն է, որն սկսեց զարգանալ 2000 թվականի վերջերից և հատկապես ակտիվացավ 2001թ. աշնանից՝ կապված ահաբեկչության դեպ պայքարի համար համաշխարհային հանրության ուժերի կենտրոնացման հետ:

Հայաստանի արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության սկզբունքների համապատասխանությունն ակնհայտ է, քանի որ այդ երկուսն էլ հիմնված են կոմպլեմենտարիզմի սկզբունքի վրա, ինչն էլ իր հերթին հանդիսանում է Հայաստանի արտաքին քաղաքական դոկտրինայի և ազգային անվտանգության ռազմավարության հենքը: Քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Քոթանջյանի մեկնաբանությամբ «տվյալ դեպքում կոմպլեմենտարիզմ նշանակում է գործընկերների ու համագործակցության վրա հիմնված արտաքին ռազմական քաղաքականություն, որը ելնում է ոչ թե «Արևմուտք-Արևելք» դիխոտոմիկ (երկբաժանության) սխեմայով, այլ պետություններին դաշնակից կամ թշնամի լինելու ձևակերպումներով, ինչը բնորոշ է Սառը պատերազմի ժամանակներին, այլ համագործակցող կողմերի ռազմական-անվտանգության շահերի պրագմատիկ համաձայնեցման արդյունքում Հայաստանի ու նրա դաշնակիցների և գործընկերների փոխլրացման սկզբունքից»[13]:

Փաստորեն, ՀՀ ազգային անվտանգությունը բաղկացած է 4 բաղադրիչներից, որոնցից երկուսը կողմնորոշված են դեպի Ռուսաստանի Դաշնությունը և հանդիսանում են Հայաստանի անվտանգության ապահովման երկու կարևոր բաղկացուցիչ տարրերը, քանի որ կայունության դեմ ուղղված հիմնական սպառնալիքները գալիս են Ադրբեջանի կողմից՝ կապված Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ: Սակայն, պետք է նշել նաև, որ Ռուսաստանի Դաշնության մարտավարությունը Ղարաբաղյան հարցի կարգավորման վերաբերյալ չունի միակողմանի դիրքորոշում, ինչի մասին վկայում են նաև ակտիվ ռազմատնտեսական հարաբերությունները Ադրբեջանի հետ[14]:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը հանդիսանում են քաղաքական ու ռազմավարական դաշնակիցներ: Երկու երկրների դաշնակցական համագործակցությունն արտահայտվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության բնագավառում համատեղ գործունեության, հատկապես՝ Հարավային Կովկասի տարածաշրջանային քաղաքականությանը վերաբերող հարցերի շուրջ միասնական մոտեցումների, քաղաքական փոխհամաձայնության և օգնության ծրագրերի, միջոցառումների մշակմամբ ու իրականացմամբ:

---

[1] Мансуров Т.З. Южный Кавказ в системе национальной безопасности Российской Федерации, http://cyberleninka.ru/yuzhnyy-kavkaz-v-sisteme-natsionalnoy-bezopasnosti-rossiyskoy-federatsii.pdf

[2] Гаджиев К.С. Геополитика Кавказа. М., 2001, С 29.

[3] Տե՛ս Онуфрийчук А.В. Проблемы реализации российских интересов на Южном Кавказе в современном геополитическом контексте, http://pglu.ru/upload/iblock/f80/uch_2009_xii_00007.pdf

[4] Цагарели М. У Южного и Северного Кавказа – общее будущее, 31.12.2012, http://www.bigcaucasus.com/events/top-day/31-12-2012/81995-prognoz_2013-0/

[5] Корнилов А.А. Геополитика современных российско-армянских отношений и ее влияние на проект “Новый Великий Шелковый Путь”, http://nashasreda.ru/geopolitika-sovremennyx-rossijsko-armyanskix-otnoshenij-i-ee-vliyanie-na-proekt-novyj-velikij-shelkovyj-put/

[6] Санакоев И.Б. Конфликты на Южном Кавказе: пути снижения межэтнической напряженности, http://kvkz.ru/stati/2426-konflikty-na-yuzhnom-kavkaze-puti-snizheniya-mezhyetnicheskoj-napryazhennosti.html
[7] Հարությունյան Գ., Տարածաշրջանի աշխարհաքաղաքական բյուրեղացում է տեղի ունենում Հարավային Կովկասում, 18.12.2013թ., http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12444
[8] Լրացուցիչ տե՛ս ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007, http://www.arlis.am
[9] Договор О дружбе, сотрудничестве и взаимной помощи между Российской Федерацией и Республикой Армения, 29.08.1997, http://www.lawrussia.ru/texts/legal_555/doc555a808x659.htm
[10] Ст. 2 Договора о коллективной безопасности от 15 мая 1992 года, http://www.odkb.gov.ru/b/azb.htm
[11] ՀՀ Գերագույն խորհրդի 28.07.1992թ. թիվ Հ.Ն-0677 որոշումը՝ Եվրոպայում սովորական զինված ուժերի վերաբերյալ պայմանագրի իրականացման սկզբունքների եվ կարգի մասին համաձայնագրի վավերացման մասին, ՀՀ Գ S 1992/14, http://www.arlis.am
[12] ՀՀ արտաքին գործերի նախարարություն, Միջազգային կազմակերպություններ, Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի կազմակերպություն, http://www.mfa.am/hy/international-organisations/NATO/
[13] Котанджян Г. В повестке - комплементаризм и многовекторность оборонной политики // Голос Армении. -2007.16 ноября.
[14] Տե՛ս Ռուսաստանը մեր ռազմավարական դաշնակիցն է, սակայն զուր է զենք վաճառում Ադրբեջանին. Սերժ Սարգսյանի հարցազրույցը Deutsche Welle-ին, 08.04.2016թ., http://www.tert.am/am/news/2016/04/08/sargsyan-interview/1986068

Армен Агабабян
Аспирант института философии, социологии и права
Национальной Академии Наук Республики Армения

РЕЗЮМЕ

Некоторые региональные факторы, обуславливающие армяно-российские отношения

В статье анализируются интересы Армении и России в регионе Южного Кавказа, оценивается их влияние на процессы гарантирования как безопасности стран, так и стабильности в регионе. Армяно-российское сотрудничество является также особенным залогом по обеспечению стабильности на Южном Кавказе, которое необходимо для мирного урегулирования одного из нерешенных конфликтов региона-Карабахской проблемы, для избежания напряженных ситуаций в зоне соприкосновения.

Ключевые слова: *Южнокавказский регион, союзнические отношения, внешняя политика, стабильность, безопасность, сотрудничество.*

Armen Aghababyan
PhD student at the Philosophy, Sociology and Law Institute
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

SUMMARY

Some regional factors conditioning the Armenian-Russian relations

The article analyzes the interests of Armenia and Russia in the South Caucasus, assesses their impact on processes guarantee the security of countries, and the stability in the region. The Armenian-Russian cooperation is also special pledge to promote stability in the South Caucasus, which is estimated necessary for a peaceful resolution of one of the unresolved conflicts in the region-Karabakh problem, in order to avoid tensions in the zone of contact.

Keywords: *South Caucasus region, federal relations, foreign policy, stability, security, cooperation.*